



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՌԱՋԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը Լ

ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

14 փետրվարի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը

Նախագահությամբ՝

Անդամակցությամբ՝

Դ. Նազարյանի

Վ. Դովիաննիսյանի

Ա. Խաչափրյանի

Ուսումնասիրելով քաղ. Կարեն Մեհրաբյանի դիմումով գործը<sup>1</sup>  
քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղ. Կարեն Մեհրաբյանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«...ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 8.2-րդ և 9-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

1. Դիմողը Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 06.04.2012թ. դադավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով նախադեսված հանցանքում եւ դատապարբերվել է:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ նորմը պես է հսկակ սահմանի «պետության իրադրությունը», այն է՝ Հայաստանի Հանրապետությունը դպրության հետ պատերազմական դրության մեջ է, թե՛ ոչ, եւ որպես ի կարարումն նշված նորմի՝ պես է

կայացվի ՌԴ կառավարության այնպիսի որոշում, որով կթվարկվի այն գեղեկությունների շարքը, որոնք գաղփնի են համարվում, ենթակա չեն փոխանցման օբյեկտների պետությանը կամ կազմակերպությանը, ինչը կարող է վնաս հասցնել ՌԴ ինքնիշխանությանը, դարձնելով անձեռնմխելիությանը կամ արդարին անվտանգությանը։ Դիմողը նաեւ գրնում է, որ իր կրղմից վիճարկվող նորմի անորոշությունը կայանում է նրանում, որ դրանում նախադեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը չի նշում «պատերազմական դրության ժամանակ» արդարադարձությունը, որը, ըստ դիմումադրուի, խաթարում է ՌԴ Սահմանադրության 9-րդ հոդվածի իրականացումը։

**2. Ելնելով դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից, դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՌԴ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով, դադարական կազմը գրնում է, որ վերոհիշյալ դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման հետեւյալ պարզաբանությամբ։**

Դիմողը վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը փորձում է հիմնավորել՝ ենթադրյալ օրենսդրական բացը մարմնանշելով։ Այդ կապակցությամբ սահմանադրական դադարանի դադարական կազմն անհրաժեշտ է համարում նշել, որ օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի գործադրության կամ իրավական կարգավորման ոլորտում գրնվող փաստական հանգամանքների նկարմամբ կոնկրետ նորմագրիվ պարզաբանված բացակայությունն է։ ՌԴ սահմանադրական դադարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշմամբ անդրադարձությունում դադարական դադարանի բացը հաղթահարման գործում սահմանադրական դադարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գրնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմագրիվ պարզաբանված բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է։ Սահմանադրական դադարանը գործի քննության շրջանակներում անդրադարձություն է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է փվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախունում է կամ կարող է խախուն կոնկրետ սահմանադրական իրավունք։ Զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դադարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դադարանի քննության առարկա միայն այն դեպքում, եթե

օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Այսպիսով, սահմանադրական դադարանի դադարական կազմն արձանագրում է, որ իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դադարանի քննությանը, երբ կոնկրետ գործով միաժամանակ առկա են օրենսդրական բացի՝ սահմանադրական դադարանի կողմից մարդանշված վերոհիշյալ չափանիշները, այն է՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտում կամ այդ խախտման պոտենցիալ հնարավորություն եւ օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված հակասական իրավակիրառական պրակտիկա:

Քննարկվող դիմումի շրջանակներում առկա չեն ՀՀ սահմանադրական դադարանի կողմից մարդանշված այն չափորոշիչները, որոնք հնարավորություն կրային առաջադրված հարցը դիմարկել «օրենսդրական բաց» եզրույթի ներքո, հետեւաբար, առկա չէ սահմանադրահիրավական վեճ:

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դադարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայփնել առ այն, որ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմումին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հագեցնիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորում: Նաեւ չի հիմնավորված, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորվել սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փասփի եւ վիճարկվող իրավանորմի հակասահմանադրականության միջեւ պարճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դադարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արդահայփած իրավական դիրքորոշման, անհավական դիմումն ակնհայփ անհիմն համարելու հիմք է:

Սահմանադրական դադարանի դադարական կազմը նաեւ արձանագրում է, որ կոնկրետ գոված դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկարմամբ կայացված համապարական դադարական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման **իրավաչափության հարց**՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ։ Փաստորեն դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց։

Դեկավարվելով ՀՀ սահմանադրական դադարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴՀՈ-21 որոշման մեջ արդահայփած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ։

Ելնելով վերոշարադրյալից և դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 32-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով, սահմանադրական դադարանի դադարական կազմը

## Ո Ր Ո Շ Ե Յ.

Քաղաքացի Կարեն Մեհրաբյանի անհապական դիմումով գործի քննության ընդունումը մերժել։



14 փետրվարի 2013թ.

ՍԴՀՈ/1-6